

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՕՏԱՐԱՉԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.

(Եարևմակուրին և վերջ)

ԹՈՅԼ ՈՒ ՏԿԱՐՆԵՐԻՆ.

(Vail'lance e-hg):

Եւ զտկարս աշխարհս ընտրեաց Առա-
ռած, զի յա հոթ արասցէ զշզօրս:

Ա. Կորնթ. Ա. 27.

*Աւելի լաւագոյն միտիւարիչ չկազ քան
նա որ ինքն անձամբ միտիւարութեան է
կարօտ:

Երբ որ կատարեալ մարդ զառնալ ցան-
կացողների համար զբում՝ էի այս լջերը և
առաջարկում էի, որ նոքա խնային և փար-
ժեն իրանց բնասուր զօրութիւնը, հնազան-
դեցնեն իրանց բնութիւնը իրանց կամքին
յարգեն իրանց մէջ կենաց աղբիւրները, մի
խօսքով ամէն բանի մէջ արիւթեան փար-
ժութին, —ինձ միշտ առնջում էր մի միաք՝ մի
զազտնի ձայն, թէ այդ բոլորը լաւ է միայն
առողջ երիտասարդութեան համար: որովհե-
տեւ զօրութիւնը առողջների բաժին է: Հապա-
խնչ պէտք է խրանես հիւանդներին, ի՞նչ
պէտք է ասես մռայլ ճակատազրից տան-
ջուելու և չարշարուելու գատապարտուած-
ներին:

Ես կարող էի պատասխանել թէ նպա-
տակիս հասած և վարձատրուած կը լինիմ,
եթէ իմ խօսքերը համոզեն գէթ մի քանի
առողջ տղամարդկանց, որ սպասազինուին ար-
դիւնաւոր պատերազմի համար: Սակայն ևս
այդպէս չեմ գատում թէպէտ անհերքելի կը
լիներ և այդպիսի պատասխանը: Խսկ եթէ
ևս այդպէս չեմ առարկում շկարծեք թէ, լուս մ
եմ: որովհետեւ խղճում եմ այն թշուառնե-
րին, որոնց կետները լոկ միայն մի անդիրջ
տանջանք է: Հաւատացեք, այդ թշուառները
միայն խղճալու և ողբալու չեն եթէ, լու-

նայենք՝ այդ խաւարի մէջ կը գտնենք նաև մի
քանի պայծառ կետեր: Եւ ևս ուրախ կը լի-
նիմ եթէ կարողանամ փոքր ինչ լցո սփռել
դոցա ախուր գոյութեան վերայ:

Ես համոզուել եմ, որ տկարժների և
թոյլերի մէջ կայ բարոյական զօրութեան մի
աղբիւր: — իսկ այդ համոզում մը փորձով բերել
եմ տառապանաց աշխարհից որպէս մի յու-
սոյ ծաղիկ՝ խորխորասի ափից քաղած: Եթի որ
միւս բոլոր աղբիւրները ցամաքին, այդ աղբիւրը
չի ցամաքի, ինչպէս որ չի ցամաքում ար-
ցունեների աղբիւրը: Ես ուզում եմ աւետել
մի քանի էակներին, որոնք իրանց տկարու-
թիւնից ճնշվում են, թէ նոքա կատարում
են բարձր կոչում: թէ նոցա թուլութիւնը մի
զօրութիւն է, որին հզօրները կարօտ են:
Այս արգելն մի մխիթարութիւն կը լինի նոցա
համար:

Նախ և առաջ այն ասենք, թէ ով որ
հիւանդութեան պատճառով մերժուել է սովո-
րական հասարակական գործունեութիւնից, նա
այնու տակաւին չի արտաքսած մարդկութիւ-
նից: Ընդհակառակ նա աւելի քան ուրիշ
հաստատուել է կեանքի հանրային հիմքի վե-
րայ: Նորա չարչարանքը յարաժամ (memento
morti) մահուամբ պսակուելու յիշատակութիւն
է:

Գործնական կեանքը մարդկանց զատել
է իրանց շահերի, կուսակցութիւնների և վի-
ճակների համեմատ: Շատ անգամ նոցա մէջ
ընդհանուր համերաշխութիւնը այն աստիճան
մեռնում է, որ երկրորդական հոգսերը իրանց
համար գառնում են կենսական խնդիրներ:
Նոքա իրանց անձը՝ նախ քան մարդ զգալու՝
զգում են աղքատ կոմ հարուստ, ծառայ
կամ աւել քաղաքագէտ կոմ կղերական, նիւ-
թապաշա կամ հոգեպաշա: Խսկ փորձանքներից
մեծագոյնը, այսինքն հիւանդութիւնը, աղբի
պէս աւելում է այդ բոլոր պատահականու-
թիւնները և հարթ հաւասար է գարձուցանում՝
վիճակների նորաւորուառութիւնները: Ամէնից
աւելի թշուառութիւնն է, մեզ սովորեցնում՝
թէ մէնք եղբայր ենք: Խօմէտացած մարդը իւր
ամէնօրուայ տանջանքներում հասկանում է,
թէ իւր բարոյական զդացումը կատարելազոր-
ծուել է, թէ ինքը օրըստօրական հազար ու

մէկ ունայնութիւնների վերայ աւելի բարձր տեսակեաից և զատումք քան ուրիշները որոնք ճշգրւում են չնշին բաներից և համազգում է, որ եթէ և ինքը ոչ մշակ է, ոչ փառաւրան, ոչ նոտար՝ այնու ամենայնին պարտաւոր է հասարակական զործք կատարելու այն է՝ ըլջապատողներին ազգել մարդկայնութեան զգացում: Նա տեսնում է, որ ազգատուել է աւանդական նախապաշտումներին սարիկադես հնագանգուելուց, և թէ մի քանի զեկաքերում իրան կաշկանգող շղթան՝ արձակութիւն է առաջիս իրան միւս գեղագերի համար: Նո տեսնել եմ թէ ինչպէս տառապանքը կամուրջներ է կառուցցել այնպիսի անդունդների վերայ, որով ոչ մի արուեստի և ոչ մի կամքի զօրութեամբ անցնել հնարաւոր չէր: Թուլութեան և կարօտութեան նոյնական պայմանների մէջ գտնուող թշուառները՝ անդիմազգելի մզմամբ իրար մերձնում են, թող մէկը լինի հարստի, միւսը՝ աղքատի զաւակ, մէկը անդրագէտ լինի միւսը լաւ կրթուած: Թող իրար մէջ զաւանութեան և ազգութեան խարութիւններ լինին – և ինչ որ նոցա միացնում է, այն է ընդհանուր թշուառութիւնը, աւելի հզօր է: Քան ինչ որ նոցա բաժանում է:

Միշտ և ամէն աեղ փորձով իմանում ենք, թէ մարդկանց միացնող հանգամանկքներն աւելի կարեոր են, քան բաժանող հանգամանքները: Մ'եզ միացնում են մեր ներքին շնորհները, բաժանում են արագին խարութիւնները: Ով որ այս բանը ճանաչում է, նա զօրութիւն է ստանում և ուրիշների համար գառնում է, զօրութեան հաղորդիչ: Հասարակաց ինչ վիճակում ես զրուած լինի մարդն աւելի օգտաւէս պաշտօն չի կարող կատարել: Քան մեզ մարդասիրութեան հրաւիրելով, իսկ այս պաշտօնը տկարն աւելի լաւ կարող է փարել միւսներից: Նախ այն պատճառով, որ ինքը իւր քարոզածի կենդանի օրինակ է, հանգիստանում և երկրորդ՝ ուրովիշեան մի ճշմարտութիւն այնքան աւելի հրապարիչ է գառնում, որ քաջ յայտնի է արաւառուղներին: Կոյքերը շատ անգամ զուարձարանութեան ժամանակ պատմում են, թէ մի անգամ Փարիզը սյնպիսի սև թուխպերով

լուսով երեայ: Տկարը միշտ մի սրտաշարք բողոք է, ազգում մարդկութեան սրտի մէջ հզօրի իրաւունքի գեմ որովհեան ով որ ազնուութեան գեմ մի կայծ պահէլ է իւր հոգու մէջ՝ նորա աչքում բռնի ուժի ոչ մի յաղթութիւն չի կարող հաւասարութիւնին լիզուին: Օգտապաշտ բարոյականութիւնը գոյացութեան կռուի հոչակուած օրէնքը և թոյիրի անգամանալի կորստեան վարդապետութիւնը, — այս ամէնը ցուրտ տրամարանութեամբ թերես մասամբ մոաց ախորժելի դառնանսակայն սրտիս զի աղպիսի զրական համարուած տեսութիւնները ջախջախուին՝ հերիք է տկարի լոկ միայն ներկայութիւնը, մանաւանդ եթէ, զա մեր մօամիկ մերձաւորն է: Այն ժամանակ ամենայն ինչ ըլջում փոխվում է: Միշտ կարելի է ուժի գեմ ոյժ գործածել: Քաջութեամբ պաշտպանուողի վերայ կատարութեամբ նետութիւն: Բայց աւելի գժուար է յարձակութիւն թոյլերի, անզինների վերայ: Դոցա պաշտպան է դառնում իրանց թուլութիւնը: Իսկ այդ թուլութիւնը այնպան պերճախօս է, որ միշտ մեծամեծ յաղթութիւններ է, տանում: Ռերեմն ակարի ձեռքով մարդու աչքի աստղ յայտնվում է մի գաղտնի զօրութեան գյոււթիւն: Որ աւելի աշխատ է, քան մարմնական ոյժը: Այս զա է, որ իւր տանջանքների նուիրագործութեամբ թելուցել է առել հետեւալ անմոռանալի խօսքը: Ռոպիշեան արագէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարելք:

Տկարն ունի իւր յատուկ կոչումը բժըշկել առողջներին օրովհեան սոքա էլ իրանց հանգի հիւանդներ են: Եւ յիրաւի, առողջութիւնը առանձին առասկ ակարութիւն է առաջ բերում: Որ վերջ ի վերջոյ անտանելի է գառնում: Փոքր ինչ հիւանդնութեան ժամանակ զօրաւոր մարդկանց անհամբերութիւնն ու շուտ յուսահատութիւնը՝ յայտնի է ամէնուն: Միթէ մեղագրենք զոցա այդ պատճառով: Ոչ, զօքա տակաւին չեն փորձուել: Դոքա հազիւհազ կարողանում են վանկ վանկ հեգել այն իւզուն, որ քաջ յայտնի է արաւառուղներին: Կոյքերը շատ անգամ զուարձարանութեան ժամանակ պատմում են, թէ մի անգամ Փարիզը սյնպիսի սև թուխպերով

Բայց փոխենք հայեցակեալը, որպէս զի առասպեկտների զօրութիւնը աւելի պայծառ

էր ծածկուել, որ բնափիշները (փողոցներում չըջելու համար) ստիպուեցան գիմել կոյրերի օգնութեան, որոնք մընում պատելու վարժեն: Զգիտեմ, արդեօք սույզ է այս իրադութիւնը, բայց ... որչափ խրատական է: Երբեմն ամենազօրեղ մորդն անգամ կարօտ կը լինի հաշմանդամի օգնութեան, որ չի գժուարանում ճանապարհ գանել չարչարանց լարիրինմոսի բաւելիների մէջ, ուր որ բախտաւորները անգարձ մոլորդում են: Եթէ զուք ճանապարհը կորցրել էք և հարուածող փորձանքներից ահարեկուել էք, գնացէք այնպիսիների մօտ որոնց մշտական աղեաներ են վիճակուել: Դուք նոցանից շատրան կը սովորէք — լոկ միայն մի պարզ համեմատութիւն անելով, և կը գառնաք հանգստացած: Գիտէք թէ, այդ հաշմերը ոչ միայն տանջվում են, այլ և ընդելացել են իրանց տանջութիւններին և կարեկցութիւն են սովորել տանջութեան գպրոցում: Զեզ տեսնելով, նոքա կը ցաւակցեն, կը մսիթարեն, այնպիսի բառեր կասեն ձեզ, որ միայն նոքա գիտեն ասել: Սոքա կը մոռանան իրանց մեծ տանջանքները և կը պատին ձեր փոքր տանջանքներով: Այս երեսութից աւելի թեթեացնող և սիրտը հովացնող բան չկայ աշխարհքում:

Երբ որ արիս թեան մասին է խօսվում: Միթէ հնարաւո՞ր է անյիշատակի թոյնել այնպիսիներին, որոնք առել են և յարաւամ տալիս են զրեթէ գերմարդկային արիսութեան օրինակներ, որոնց երկարատե համերեստարութիւնից ջախջախվում է, նոյն իսկ տանջանքը, ինչպես որ սակի ընդիմութիւնից ջարդու փշուր է լինում վրան կոփահարող կոտոր: Խրատական է մի հայեացք ձգել այս կոդմը: Այստեղ ափշած հանգիպում ենք այնպիսի իրօգութիւնների, որ անհասանելի են մեր մոքին: Մարդ հիմանում է այսպիսի սրասողներութիւնից այսպիսի հարստացնող աղքատութիւնից: և նորա հոգին սկսում է կամոց կամոց ըմբռնել հին և սուրբ ճշմարտութիւնը, որի յաւիտենական նշանն է խաչը թէ: աշխարհքի փրկութիւնը չարչարութեան մէջ է: Օգտագաշներ, ուժի առաքեալներ, հանգերձեալ ոչեւթեան մարգամէներ, ամեն անսակի շուայտութիւններին անձ-

նատուր եղած մարդիկ — ձեզ ամէնիկ կոչում եմ ակարների և թոյլերի գտասատանի առաջ: Զեր աչքում հարկաւ գցութիւն չունին զոքա: Բնական ընտրութիւնը պահանջում է, գոյա հեռացումը կենսական ասպարիզից — նոյն իսկ ծնուելու օրից որովհետեւ անօգուտ և աւելորդ արտրածներ են սեպգում թւ եթէ մարդիկ միայն անասնւն կենդանի լինելին այդպէս էլ կարուելին: Բայց ի՞նչն արգելեց մի այդպիսի վճռ զնելուն: ինչո՞ւ համար մարդկութեան մեծագոյն ծառարութիւն մատուցանողների կարգում՝ հանդէ կամանկանեկ կել հաշմանդամ: Ներ և ախտացեալները: Զեր մերժած քարը — անկեան վէմ է: Այս է ձեր անբուժելի թուլութեան ամենապայծառ ապացոյցը: Զեր խելքի աշխարհքը՝ նեղ և սուտ աշխարհ է: Զեզ յաղթել են անգամալոյները, կոյրերը, խուլերը, ամէնքը, որոնք խեղձ ողօրմելի կեանք են վարում և տառապում են:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆՊԱՅՈՐԻԱՑ

ՊԱՏԱՀԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Wie erziehen wir unsern Sohn Benjamin-ից):

Այս զիսում պէտք է տանք ձեռաց մարդ-փառ որ հաւաքուելով մանեթներ կարող է կազմել մատուցածք ըստ երեսութիւն չնչին է, բայց բան ու գործի մէջ մեծագին է հանգիսանում: Հետեւ եալ կանաները օրական կենաց մանր հանգամանքների յիշատակութիւն են.

Առաջին կանան տառում է ֆաստիարակելիս միշտ մի ծեռքը միւսին միարան ընկեր պիտի լինի: Այս լուսաբանելու համար պատմենք մի իրական գեպք: — Մի աշակերտի մասին ուսուցիչը ծնողներին անգամար զանգատուել է, միշտ թերի զանելով նորա ջանքը, փարքը, արգիւնքը: Վերջապէս վճռական և վախճանական բազով ու զարկուեցաւ ծնողական տունը: Այս առթով մեղասորի մայրը ներկայացաւ զպրոցի վերատեսչին և վարժ լեզուով ծառ կարգաց զաստիարակութեան գմբախակեան թիւ իսկական պատճառի մասին: Այս հաստատագես հաւատացնում էր, թէ ինքը ոչ մի բան չի խնայում և հնարաւորակ ախտատում է, որ իւր աղան կարգ սիրէ,

ջանասեր լինի և լաւ գործէ, սակայն հայրը թողի է. ինչ որ ինքը մայրը արգելում է, հայրը թողի է առջիս երբ որ ինքը խիստ միջոցների է, զիմում՝ նա իւր հայրական թուլութեամբ խափանարար է, հանդիսանում։ Ռերիշ ճար չկայ, բայց եթէ, վերատեսութը մի ազգունամակ գրէ, հօրը լու թջ խրատելով, որ նա հետեւ, աւելի խելացի գաստիարակչական սկրդրունքներին և մանու կին աւելի խստութեամբ կրթէ, այն ևս մօր առաջնորդութեամբ։ Վերատեսութը մօրը հասկացրեց, թէ, ինքը այնքան իշխանութիւն չունիր որ յաւ ակնէ, հօրն ու մօր, առն ու կուջ յարարերութիւնները կանոնաւորել ինքը միայն խորհուրդ կարող է առլ որ հաշտուելու և միախօրհուրդ գործելու աշխատեն իրամանք անձամբ, առանց գրսի միջամտութեան։ Քայլաքափարութեամբ և բարեհամրոյր կերպով նա արձակում է, մօրը, իսկ սա իւր մանկավարժական անյաջող փորձից հեռանում է աշխած սրտովի կէ, ժամկց յետոյ, առանց զիտենալու, թէ, մայրն արգէն այն աեղ է եղել գալիս է մանուկի հայրը վերատեսչին պատմելու, թէ, բոլոր թշուառութեան պատճառը ոչ թէ ինքն է, այլ կինը որ մանուկի ամէն կամսակորութիւնները կատարում է, երբ որ ինքը հայրը զավել և ուզում որ միշտ պաշտօնում է մանուկին, երբ որ ինքը հայրը խրատել է, ուզում։ ապա ուրիմն անհրաժեշտ է, որ վերատեսութը լուրջ նամակ գրէ, մօրը պատուեր տալով, որ նա լուխելումէ իւր գաստիարակչական պարտականութիւնները և հօր ջանքերին արգելքներ չը դնէ և այլն (տես վերը)։ — Որքան որ հայրն իւր ճառը շարունակում էր այնքան վերատեսչի ծիծաղը աւելի էր շարժում։ Անջապէս սա բացարեց հօրը, որ կէս ճամ առաջ մայրը նոյն տեղում նստած՝ ծիչդ նոյն բաներն էր պատճեմ հօր մասին, ինչ որ նա ինքը այժմ մօր վերայ է ճանրացնում։ Այս մարդու աշքերը խոշոր բացուեցան, գէմքը կարմիրց Եւ երբ որ վերատեսութը լաեց, մարդը կատաղութեամբ շարունակեց կուջ մասին ամբասանութիւնները, որ խօրամանկութեամբ իրանից առաջ է կանխել, իսկ բանն իր ոք այնպէս է եղել ինչողիս որ ինքը ճանուցեց, ամէն բանի մեղաորը մայրն է, և աշա կեր-

թայ տունը և այդ բանը կապացուցանէ նորան։ Վերատեսութը հարկաւորութիւն չունէր խանգարելու, որ մարդ ու կին իրար հետ խօսենին միայն խորհուրդ տուեց չեռացող հօրը, որ այսուհետեւ աշխատեն իրանց մէկ ձեռքով շինածը՝ միւսով չքանդել և եթէ իրանց որդու կրթութեան գառը պառուները տեսնեն, այլ ևս մէկը չքարզէ իւր մեղքը միւսի վերայ։ Միայն Աստուած զիտէ, թէ այնուհետեւ ամուսնական անհամաձայնութիւնները ինչով վերջացնու Եւ որովհետեւ ծառը արմատով է ծառ, որդուց էլ շտարան չէր յուսացուի։ Նա հարկաւ այն մարդկանցից մէկը գարձաւ, որոնց բախտով հայրը փոքր ինչ հարստութիւն է ունենում և որդուն հնար է տալիս ազատ մնալու գրամ վաստակելու հոգսերից։ — Այս պատճութեան խրատը պարզ է, մեր որդկերանց կրթելիս մնը պէտք է հոգւով ու սրտով միաբան լինիք և իրար համաձայն գործենք։ Նոյն իսկ եթէ տարբեր կարծիքներ ևս ունենանք, մանուկը այդ բանը չոգւեք է իմանայ, ապա թէ ոչ մանուկները այնքան նուրբ զգացաղութիւն ունին մանկավարժական աններգանակութիւնների համար, որ զարմանալի հմտութեամբ կը կարողանան իրանց քմաց համեմատ օգուտներ քաղել ծընողաց այդպիսի տարածայնութիւնից։ Ինչպէս ասացինք, ուրեմն թող մի ձեռքը միւսին ընկերանայ և երբեք սացլը չծուի երկու ծայրերից։

Առանին երկրորդ կանոնն է, Արինդ մի պղտորիք, հայր։ Այս կանոնն էլ լուսարաններ կեանքի տեսաբանով։ Զօրս որդու տէր մի հայր կար, որ կօշումն ու պաշտօնը կատարելիս միշտ հանգիստ մնալու և վայելչութեան ծանրութիւն պահելու կարողութիւն ունէր, բայց երբ որ ճաշին տուն էր գալիս՝ այդ մարդը փոխվում էր։ Հենց որ նա իւր որդկերանցով շրջապատած սեղանին էր նստում, սովորութիւն ունէր դպրոցական արդիւնքների մասին նոցա հարցումներ տալու, և եթէ գատերից մէկի մասին անյաջողութիւն էր լսում նա այնպէս էր կատաղում, որ միշտ օրուայ ծանր աշխատութիւններից կազդութելու ժամը՝ ամենաանտանելի և ապահակահարուստ ժամը՝ էր գառնում։ Այնուհետեւ թէպէս հայրը ինքն իրան խուս

տանում էր հանգիստ մեալ՝ սակայն միշտ գարձեալ զրծում էր իւր խռոտումը։ Մեծ մասով տեսարանը այսպէս էր ընթանում նստում են սեղանի շուրջ և հայրը հարցնում է, թէ ի՞նչպէս ընթացան զասիրը։ Առհասարակ էրնստը, եզրայլներից աւազը, թերութիւն չէր ունենում։ Խսկ Վիլլին, երկրորդ որդին։ Բատիներէն թելադրութեան մէջ 10 սիալ է արիլ և «անրաւ արար», նշան է սատցել։ Հայրը խոժորուելով որդու վերայ, հետաքննելով հոգին է հանում։ Թէ ի՞նչպէս է այդ պատահէցը և բնականարար կամ խսպառ պատասխան չի ստանում (ասպա թէ ոչ եթէ Վիլլին զիտենար), թէ սխալները ինչպէս են գոյանում անշուշտ սխալներ չէր զործի)։ Կամ (այս էլ շատ բնական է) մի երեելի յիմնոր պատասխան է տալիս։ յամենայն գեղս հայրը երկու դեսպից էլ սրանեցում է, և այլպէս պղտութ զիմում է մի մներին։ Երրորդ տղան կշտամբելու տոհիթ չի տալիս, իսկ անրախտ թուղին չօրբորզը խիստ անբառ արար կերպով է լուծել թռւաբանութեան ինդիքը։ Հօր զայրայիթը այս անգայ աճելով աճում է, ծաշը հասել է մինչև արգանակի և խորովածի միջոց-ժամանակը, բողէն ուրիմն յարմար է և տեսարանը գատառան է գառնու և թուղին ստանում է իւր ապատակի բաժինները, բայց Վիլլին ևս, որ փորձանքից ազատուել էր, յանուն արդարութեան հաւատարութեան՝ նոյնպէս ապատակներ է ու առում այն ևս աւելի կատարի հարու ածներով իրք անվճար մնացած հասուցում։ Շփոթութիւնը ծայրացեզութեան է, հասնում։ Ճաշի մնացած մասը դառնանում է ամենի համար, բոլոր ուղղակի և անուղղակի մասնակցողները այդ բանը անարտունջ համարում են որպէս իրանց ճակատի զիր։ Խսկ հայրը, որ զարձեալ անհաւատարիմ գտնուեցաւ իւր խռոտման, ինքն իւր մասամունքների մէջ ընկնելով՝ տառում է, ո՞նչ օգուաց եթէ մենք զեզեցիկ կանոններով ենք մեզ կազում բայց անզգաստ բուգէներում աւելի մեծ եռանդով քանդում ենք կանոնները։ Երեկոյին հայրն ու մայրը թարսն են զնում համբէտը տեսնելու համար, և երբ որ սա՝ բնձի վերայ տեսարան ներկայացնելուց փոքր առաջ հարացիսին առում է,

«Տուր ինձ մի մարդ՝ որ չե իր կրքերի
գերին»:
Ես կը կրեմ նորան սրտիս կենդրուում՝
իմ սրտիս սրտի մէջ, ինչպէս կուռմ եմ
քեզ»:
Ժամանակ հայրը իւր լծակցից յան-
ձ մի մեղմ ազգաբարութիւն ստանա-
ինքն իւսում սկսում է խորհել. «Գեթ
ուշեակ մարդ եղիր», որով ընդ միշտ սրբ-
ութքում է հին Ագամից մերկանալ և հա-
ստարիմ մեալ արիւնդ մի պղասորիր, հայր»
ո՞ին:


Առանին երրորդ կանոնն է. Մի չսփա-
ց լաստիարակիր. Խակ զաստիարակիչնե-
շատերը մանաւանդ մայրերը գործը փշաց-
մ են այն բանով որ մանրակրկիտ բազ-
րազութիւններով զաստիարակութեան հա-
են առանաւ, և չենց այն բոպէներում,
որ աւելի հարկաւոր է գտունում իրանց
ացի միջամտութիւնը, նոքա ծառիրից շր-
ած՝ անտառը չեն տեսնում. Ես ձանաչում
մի ժիր մօր, որ հոգւով շնորհալի է,
ծում է խոզով և հարուստ և աեղեկու-
ններով. Նա մի անգամ ինձ մօտ արտնջաց,
ինիս զժու արանում է ընդհանուր ճաշ-
ոյթների ժամանակ միշտ յարմար նիւթ
իւլ վայելուչ զբուցարութեան համար,
միշտ աշխատում է, կանխաւ ընարել և պատ-
ակել իւր խօսելիք առարկաները. թէ իւր
ակների վարժապետն էլ արդ բանին նը-
տել է ձգուում. բայց շատ անգամ հը-
չեն ունենում բան գտնել: Վերջապէս
ոցից ինձանից թէ ես ձաշելու ժամանակ
մասին եմ խօսում զաւակներիս հետ-
ու հարցմանը մասամբ անակնկալ էր ինձ
մար. ևս անպատճառատ էի ընդհանուր
սովով հարցմանըին լրումն առլուս իսկ իմ
անի խօսակցութիւնները մի վերնազրով
որագրելու՝ անհնար էի համարում: Սակայն
թութիւնից զուրս զալու համար պա-
սիանեցի. Եթէ առձեռն բան չը գտնուի
խօսում եմ փող փշելու և շուին շը-
նելու մասին, խակ առ հասարակ թօղնում
որ խօսակցութիւններն ինքնին կազմուին
պէս որ գեպքը բերէ, միշտ աշխատելոց
ապէի այնպիսի նիթերից, որոնք ու բա-

խութեան մէջ թօյն կարող է, ին խառնել կամ իմ սրգոց պիտանի չէին կարող լինել: Բայց յամենայն գլւաս ևս նոցա ազատում եմ լուծից այն ժամանակը, երբ որ ոչ մի անասունի չենք զանում հանգիստ առաջ Եթէ կերակրելու ժամանակ ձիուն այլ ես տեղից չենք քշում: ապա մեր սրգիքն էլ ուտելու ժամանակ չը պլաք է, ընկճուին գժուարամարս շինովի խօսակցական նիւթերի ծանրութեան լծի առարկ: — Եւ մենք մեր պահանջները չպետք է այնքան էլ իմաստակութեան հասցնենք, մենք առանց ոյն էլ խիստ արամագիր ենք մեր խելքին զօր առաջ և փոքրիկներին տանչել: Մեր մանկութիւնը անձնական ազատութեան երջանկութիւնից իսպատ զրկուած է, որ Անդիացին այնպէս քաջարար վայելել գիտէ: Ընասնիքը իւր հոգացող մայրելով դայեակներով, ծառաներով ու աղախիններով, ուսումնարանը իւր ըլջանից զուրս և ընասնեկան սահմանների մէջ ունձող պահանջներով վերջապէս արթուն և արի ոստիկանութիւնը և այն, սոքա ամենքը մանուկներին ազգարարում են, որ գարնան արեի առակ և ձմեռուայ ձիւնի վերաց խաղալու ժամանակ, անտառում գաշտում և փողոցում վազվրդիլու և առ հասարակ աշխատութիւնից յետոյ հանգիստ առնելու միջոցներին՝ նոքա իրանց խելօք պահեն և ամէն տեսուկ մանկական խիզախութիւնները և ինքնուրոյնութիւնները թօթափեն իրանցից, այնպէս որ վերջի վերջոյ իրանց մէջ ուրիշ ոչինչ չմնայ, բայց պատաւական մանկութիւնից: Այս պատճռառվ մանուկներից շատերը լու խնամուած են, ինչպէս որ նեցուկների վերաց կախած խողոզի որթը խնամուած է լինում: բայց արգեօք լսու են կրթուած: Արդեօք կարող են նոքա առանց օժանդակների և առանց նեցուկների փորձանքներին զիմանալ՝ մատաղառունկ կաղնու պէս որ հոգմերից թէպէտ ձիվում է, բայց չի կորցվում կամ գետնին տապաստ չի ընկնուամ: — Մի աեղ Գեօթէն մանկական սնկարութիւնները համեմատում է ցողունի տերենների հետ, որնք հետզետէ ինքնին թափվում են: բայց այդ պատճռառվ բայց չի վեասփում: Նա մանկութեան պակասութիւնները տանելի է, համարում է եթէ

մենք անոնք նկատենք որդէս խակ պառզի թթուուեկներ: «Մարդա», ասում է նա: «զանազան աստիճաններ ունի, որ պէտք է ընթանայ, իւրաքանչիւր աստիճանին կցորդած են իրան յատուկ առաքինութիւններն ու թերութիւնները, որնք այն միջոցնեն, երբ որ երեսում են, պէտք է ըստ ամենայնի բնական համարուին և իւր ժամանակին խիստ կարես են: Հետեւեալ աստիճանում նա զարձեալ փոխփում և այլ եակ է գառնում առաջուայ առաքինութիւններից և թերութիւններից հետք անգամ չի մնում և տեղը բռնում են այլ կերպեկն ու անկերպարանութիւնները: Եւ այսպէս շարունակվում է մինչեւ վերջին փոխակերպութիւնը, և ուրիշն մենք երրորդ չետք կարող գուշակել: թէ ապադայում ինչ պիտի գառնանքը: Մենք պէտք է մեծ խնամքով վերաբերուինք այսպէս զարգացած առաքինութիւններին և թե ութիւններին: պէտք է աւելի թողնենք դառնալ, ինչ որ բնականապէս դառնենք, ինչ որ ծգնուածն են, քան արուեստով դարձնենք, ինչ որ ծգնուածն ենք դարձնել: մեր գաստիարակչական խնամքը առաւելապէս այն պէտք է լինի, որ մատազ մանուկները մեր աշքի առաջ ածեն և մեր բնութեան համեմատ ընթանան, որոնք անշուշտ մի և նոյն նիւթից են շինած, ինչից որ մենք ենք սահեցծուած: Երբ որ մենք ծառը ջրում ենք, աւելորդ է հարցնել, թէ էլ ինչ պէտք է անենք, որ ծառըն ածի: Աստուծոյ արեն արգէն միշտ կայ ու կայ, և մեր շուրջն ամենայն ինչ ինքնին ածում և բարգաւածում է: Աւելի լաւ է, որ մենք մեր «Զափազանցութիւններով» շատ էլ չթուլցնենք բնութեան ներգործութիւնները: Խիստ խնամուն լինելու ցանկութիւնն արգէն խիկարութիւն է: —

Առ անին չորրորդ և վերջին կանոնն ասում է: Լեզուներդ կարծ պահեցէք ծեր սաների առաջ: Վասն զի նոցա ականջը շատ անգամ աւելի է լուսում: քան գուք կարծում էք: Իսկ չար լեզուն և չար ականջը՝ երկու ան էլ զժողովի արբանեակներ են: ի՞նչ առեւ, որ չի խօսփում մեր մանուկների առաջ: Ուրախի անզգութեամբ գատում ենք նոցա առաջ մեր որիքի լինիրեն երիս: ի՞նչ թեթեամտութեամբ լիդհանուր վճիռներ ենք յայտնուած առանց

մասնաւորապես բաւարար հիմք ունենալու: Ինչքան միամիտ ենք: կարծելով իրր թէ մեր սանը զեռ ևս չի հասկանաց մեծերի խօսակցութիւնները: Բայց և այնպէս այդ պատիկները մեծերի պէս ականջ ունին: Ո՞քան մարդիկ չարտիսոսվում են տարապարտուց որով սխալ կարծիքներ են սահանում նաև իրանց շրջապատող մանուկները: Գեօթէին մի անգամ իւր ծանօթ փոքրիկ մանուկները չողջունեցին, որովհետեւ իրանց ծնողները զրպարտութեամբ Գեօթէի վերայ բիծ էին դրել: Մինք առ հասարակ սովորութիւնն պիտի ունենանք, երբէք մեր ընկերակիցներին չարտիսութեամբ չդատել եթէ ճշգիւ անդեակ չել լինինք, աւելի լաւ կոնենք, եթէ նախ մեզ ումեզ հարցնենք, թէ ի՞նչ խորհրդավ ենք պատմում այս բանը: Խոկ մեր զաւակների նկատմամբ նոյն խոկ այս հարցմանքը աւելորդ պիտի լինի: որովհետեւ նոցաւ առաջ մեր լեզուն միշտ պէտք է լիովին սանձի տակ պահուի, ծնողական առանն ու հարազատների շրջանը պէտք է զաւայ պատշաճից և վայելութեան՝ ուրեմն առաւ ելատելու լեզուի պատշաճից և վայելութեան՝ սրբափայր: մանաւանդ որ մեր մանուկները դժբախտարար շատ վազ են հարկադրվում բամբասանաց աշխարհքը մանել:



ԲԱՆԱԾՈՒԹՅԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԱՅԵՍՄԲԵՐ ՄԻԿԻ ԳՐԱԴԵՐՈՒԱԾ ԱՍՈՒՊԱՆԵՐԸ.

Առաջիկայ նոյեմբերի 1-ին տեղի պէտք է ունայ մի գեղեցիկ աստեղագիտական երեսով: որի հետ ցանկանում ենք ծանօթացնել Արարատի յարդելի ընթերցողներին. Մեր յօդուածը կը լինի համաօտ և հասարակութեան մատչելի ոճով դուրս ենք թողուած՝ գիտական նուրբ հաշվաները: որոնք մասնագիտաներին են միայն հետաքրքրում: Բայց որպէս զի մեր ասելիքները աւելի որոշ և հասկանալի լինեն հասարակութեան: թշուլ ենք տալիս

մեզ գնել նախ մի քանի հիմնական ծանօթութիւններ Կեպերի աստեղագիտական օրէնքների: արեւ զերական ծգողութաան: գիտաւորների կազմութեան և լու կը վերայ:

Այս լայնածաւալ տիեզերքը կարելի է համեմատել մեր ձեռքում գտնուած մի որեկցէ մարմնի հետ ինչպէս որ մի մարմին բաղկացած է հիւլէն երից: որոնք իրար հետ չեն կցուած: այլ ծակոտիկներով բաժանուած են. նոյնպէս նաև տիեզերքը լցուած է բազմաթիւ երկնային մարմիններով (սրանց մէջ նաև մեր երգիբը): Աւրեմն եթէ տիեզերքն առնենք իրը մի մարմին, երկնային մարմինները կը լինին նրա հիւլէնները և նրանց միջի անջրպետները ծակոտիկներ:

Երկնային մարմինները իրանց մէջ ունեցած ծանրականութեան պատճառաւ բաժանուում են խմբերի: մի քանիսը գտնուում են այս խմբի մէջ, ուրիշները գտնուում են մի ուրիշ խմբի մէջ: Այս խմբերը աստեղագիտութեան լեզուով կոչուում են շուրջիւն: ինչպէս օրինակ Արեգակնային դրույիւն: Քրութիւն ասելով պէտք է հասկանալ պարզապէս: թէ այս ինչ այս ինչ մարմինները մի ուրիշի բոլոր կատարում են մի շրջան, որից յառաջ է գալիս բաւարում:

Այս մարմինները, որ միւսների բոլորտիքն են գառնում՝ կոչուում են մոլորակներ, խոկ այդ միւսները՝ արեգակներ. նաև մոլորակները կարող են ունենալ արակենակներ: խոկ զարձեալ արեգակները ամերող իրանց գրութեամբ գտնուում են ուրիշ արեգակների շուրջը:

Բոլոր այս շրջանների օրէնքները գտնուել են, որոնք թէկ շատ կնճռուած են, բայց ունին կատարեալ մաթեմատիկական ճշգութիւն: Մենք պէտք է յիշենք այստեղ Կեպերին: որ ամենից նշանաւորն է աստեղագիտական օրէնքները գտնողների շարքում:

Կեպերի օրէնքների հետևութիւններն են.

1. Մի մոլորակի շրջանը մակարդակային կոր գիծ է.

2. (Rayon vecteur) մակարդակային արագութիւնը հաստատ է.

3. Այս շրջանը ձևացնում է մի էլիպս՝ որի վառարաններից մինը գրաւել է արեգակը.

4. Տարրեր մոլորակների համար մակարդակային արագութիւնը համեմատական է շրջանների (paramètre) քառակուսի արմատին.

Կեպերի օրէնքներից գիտարինաբար հետևում է թէ:

Երբ մի մոլորակ ենթակայ է հաստատ մի կէտի ձգողութեան և իր հեռաւ որութեան քառակուսուն հետ խոտորնակ համեմատական է,

1. Կարս շրջանը կը լինի մակարդակ և մակերեսի օրէնքը տեղի կունենայ.